ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ԱՐԲԻՏՐՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս ռեկտոր Սերգեյ Առաքելյանի՝ մի կողմից, և Արբիտրների Բարձրագույն Դպրոցը (այսուհետ՝ Արբիտրների դպրոց), ի դեմս տնօրեն Աննա Խաչիկյանի՝ մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կողմերը կիսում են նմանաբնույթ առաքելություններ և ցանկանում են համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, նպատակ ունենալով կատարելագործել Արբիտրների դպրոցի ունկնդիրների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման ընթացակարգերը համատեղ դասընթացների և այլ միջոցառումների կազմակերպման և իրականացման միջոցով՝ Կողմերը համաձայնեցին հետևյալի մասին.

I. Հուշագրի նպատակները

1. Հուշագրի նպատակներն են՝

ա) հաստատել ակտիվ և արդյունավետ համագործակցության, ինչպես նաև փորձի փոխանակման Կողմերի պատրաստակամությունը.

բ) նպաստել արբիտրաժային ոլորտում ներգրավված մասնագետների որակավորման բարձրացմանը՝ լավագույն միջազգային փորձին համապատասխան.

գ) նպաստել արբիտրաժային ոլորտի մասնակիցների միջև կառուցողական և շարունակական համագործակցությանը:

II. Համագործակցության առարկան

2. Կողմերը համաձայնում են՝

ա) կազմակերպել համատեղ դասընթացներ, գիտական միջոցառումներ (համատեղ քննարկումներ (կլոր սեղաններ), գիտաժողովներ, սեմինարներ և այլն).

բ) միմյանց օժանդակել մասնագիտական նյութերի, գրականության, ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հարցում.

գ) Կողմերի համատեղ դասընթացների անցկացումն ապահովել համատեղ մշակված ուսումնական ծրագրով.

դ) համատեղ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում իրականացնել գիտական հետազոտություններ.

ե) անհրաժեշտության դեպքում իրականացնել կադրերի փոխանակում դասավանդման, հետազոտական աշխատանքների նպատակներով.

զ) իրականացնել Կողմերի միջև համաձայնեցված այլ միջոցառումներ:

III. Եզրափակիչ և անցումային դրույթներ

3. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.1. Կողմերը կարող են Հուշագրում փոփոխություններ կատարել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխությունները ձևակերպվում են առանձին արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրման պահից և կազմում է Հուշագրի անբաժանելի մասը:

3.2. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Հուշագրի գործողությունը դադարեցնել ցանկացող կողմը մյուս կողմին այդ մասին գրավոր տեղեկացնում է առնվազն երկու ամիս առաջ: Այդ դեպքում Կողմերը պարտավորվում են ավարտին հասցնել մինչև Հուշագրի դադարեցումը չավարտված ծրագրերը:

3.3. Հուշագրի կատարմանն առնչվող հաղորդակցությունը կատարվում է Կողմերի՝ Հուշագրում նշված տվյալների հիման վրա:

3.4. Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Ստորագրված է ք. Երևանում 2022 թվականի մայիսի 5-ին երկու օրինակից՝ հայերենով:

IV. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Արդարադատության ակադեմիա, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0054, Փիրումյանների 9	Արբիտրների Բարձրագույն Դպրոց, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Վարդանանց փ., շ. 6, բն. 10
Ռեկտոր՝ Ս. Առաքելյան	**Տնօրեն՝ Ա. Խաչիկյան**
Ստորագրություն	Ստորագրություն